



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-5-10

Թիվ 20/ *131*
28 ,, հուլիսի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ`

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի ղեկավարի կողմից 2020թվականի հուլիսի 09-ի մինչև հուլիսի 27-ը ընունված որոշումները :

Առդիր ,, *d* ,, թերթից:

Համայնքի ղեկավար`

Ռ.Մարգարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐՁԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» հուլիսի 2020 թվականի N 22-Ա

ՍԱՀԱԿ ՍԵՐՅՈՑԱՅԻ ՍՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԵՎ ՄՅՈՒՍԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՄԻՆՉԵՆ 20% ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ, ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Արմավիր գյուղական համայնքի բնակիչներ՝ Սահակ Սերյոժայի Մուրադյանին, Հայկանուշ Մխիթարի Մխիթարյանին և Օլգա Սահակի Մուրադյանին՝ համաձայն Արմավիր գյուղական համայնքի բարեփոխումների և հողի սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման պատկանող 0,10 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը, քարտեզագրման արդյունքում կազմել է 0.1148 հա՝ /կադաստրային ծածկագիր 04-020-172-009/;

0.10 հա գյուղ. նշանակության հողամասին կից ավել օգտագործվող 0,0148 հա հողամասը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-րն մասի 24-րդ կետով, և հիմք ընդունելով Սահակ Սերյոժայի Մուրադյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- 1 Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 27.05.2020 թվ-ի թիվ 16-Ա որոշումը;
- 2 Օրինական գյուղ. հողամասին կից մինչև 20% ավել հողամասը՝ 0.0148 հա, անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Սահակ Սերյոժայի Մուրադյանին, ծնված 06.02.1969 թվ-ին,՝ Հայկանուշ Մխիթարի Մխիթարյանին ծնված 12.04.1972 թվ-ին, Օլգա Սահակի Մուրադյանին, ծնված 15.12.1993 թվ-ին
- 3.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
- 4 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

Արմավիր համայնք
2020 թվականի հուլիսի 10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

«10» հուլիսի 2020 թվականի N 23-Ա

ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ԿԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- 1 Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 06.07.2020 թվ-ի թիվ 21-Ա որոշումը
- 2 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Գևորգ Հակոբի Վարդանյանին, ժառանգության իրավունքով պատկանող տնամերձ հողամասին՝ /ծածկագիր 04-020-002-005/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 45-րդ փողոց թիվ 4 հողամաս:
- 4.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
- 5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար

Ռ.Ֆ.Մարգարյան



2020 թվականի հուլիսի 10
Գ.Արմավիր